ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՉԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ»

Հայաստանի Հանրապետության **Կ-186-16.11.2017-ՊԻՄԻ-011/0** օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ Ի ՈՐՈՇՈՒՄԸ
1	**Պատգամավոր Հակոբ Հակոբյան**	Հոդված 3	Առաջարկում եմ նախագծի 3-րդ հոդվածում տալ «ֆիզիկական տառապանք» և «հոգեկան ուժեղ տառապանք» հասկացությունների սահմանումները: Չնայած նրան, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածով և ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով տրված են այդ սահմանումները, պետք է նշել, որ այս օրենքի իմաստով ենթադրվում է, որ այդ սահմանումները այլ են:	Ընդունվել է մասամբ, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է մասամբ:
2.	**Պատգամավոր Հակոբ Հակոբյան**	Հոդված 3, 2-րդ մաս	Առաջարկում եմ նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ ենթակետը վերանայել և վերախմբագրել 4-րդ ենթակետի հետ: «Անտեսում» հասկացությունը բռնության տեսակ համարելը վերանայել, կամ՝ այն միավորել տնտեսական բռնության տեսակի հետ:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
3.	**Պատգամավոր Աղվան Վարդանյան**	Հոդված 3, 2-րդ մաս	Առաջարկում եմ նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում կատարել համապատասխան լրացումներ՝ չափահաս գործունակ	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար	Ընդունվել է:

			զավակների կողմից անգործունակ ծնողների համար անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարելը անտեսման սահմանման մեջ ներառելու համար:	լրամշակվել է:	
4.	**Պատգամավորներ Հակոբ Հակոբյան Աղվան Վարդանյան**	Հոդված 4, 1-ին մաս	Առաջարկում ենք նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի ա/ կետում «անկախ համատեղ բնակության հանգամանքից» արտահայտությունը տեղափոխել «ամուսին» բառից առաջ	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
5.	**Պատգամավորներ Հակոբ Հակոբյան Աղվան Վարդանյան**	Հոդված 4, 1-ին մաս	Առաջարկում ենք նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետում «ապաստարան» բառը փոխարինել «ընտանիքում բռնության ենթարկված անձի հոգածության կենտրոն» բառով:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
6.	**Պատգամավորներ Հակոբ Հակոբյան Աղվան Վարդանյան**	Հոդված 8, 4-րդ մաս	Առաջարկում ենք նախագծի 8-րդ հոդվածի 4-րդ մասում ավելացնել դրույթ հետևյալ բովանդակությամբ. «Բռնության ենթարկված անձի դիմումի հիման վրա, դատարանի պատճառաբանված որոշմամբ, «6 ամիս» և «3 ամիս» ժամկետները կարող են կրճատվել կամ ուժը կորցրած ճանաչվել:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:

7.	**Պատգամավորներ Հակոբ Հակոբյան Աղվան Վարդանյան**	Հոդված 11, 3-րդ մաս	Առաջարկում ենք նախագծի 11-րդ հոդվածի 3-րդ մասի «ամսեկան առնվազն» բառերը փոխարինել «ամսեկան առնվազն մեկ անգամ» բառերով:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
8.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	Նախագիծ	Օրենքի նպատակները շարադրել նախաբանի տեսքով	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
9.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	Հոդված 1	1-ին հոդվածից հանել օրենքի նպատակները	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
10.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	Հոդված 2, 1-ին մաս	2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «ընտանիքում» բառը փոխարինել «ընտանեկան» բառով	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
11.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	Հոդված 3, 1-ին մաս	3-րդ հոդվածի 1-ին մասում «համարվում» բառից հետո լրացնել «սույն օրենքով սահմանված» բառերը, իսկ «արարքը» բառից հետո լրացնել «կամ անտեսումը» բառերը	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
12.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	Հոդված 4, 1-ին մաս	4-րդ հոդվածի 1-ին մասում «Սույն օրենքի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են» բառերը փոխարինել «Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները սույն օրենքում ունեն հետևյալ իմաստները» բառերով	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:

13.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	Նախագիծ	Նախագծի ողջ տեքստում «Աջակցության կենտրոն» բառերը փոխարինել «աջակցության կենտրոն» բառերով	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
14.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	Հոդված 4, 1-ին մաս	4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել «անկախ կազմակերպաիրավական ձևից» բառերը	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
15.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	Հոդված 4, 1-ին մաս	4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում«ընտանիքում բռնություն գործադրած անձ՝» բառերից հետո լրացնել «ֆիզիկական» բառը	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
16.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	Հոդված 4, 1-ին մաս	4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «ընտանիքում բռնության ենթարկված անձ՝» բառերից հետո լրացնել «ֆիզիկական» բառը.	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
17.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	Հոդված 4, 1-ին մաս	4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետից հանել«Ընտանիքում բռնության ենթարկված անձն իրավունք ունի օգտվելու անվճար իրավաբանական և առաջնային բժշկական օգնությունից, ընտանիքում բռնության ենթարկվածների աջակցության հատուկ հաշվեհամարից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:

			կողմից սահմանված դեպքերում, Աջակցության կենտրոնի, իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև ապաստարանի կողմից տրամադրվող ծառայություններից» բառերը.		
18.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	Հոդված 6, 1-ին մաս	6-րդ հոդվածի 1-ին մասում «ընտանիքում» բառից առաջ հանել «առերևույթ» բառը, և այն լրացնել «հանցակազմի հատկանիշներ» բառերից հետո.	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
19.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	Հոդված 6, 1-ին մաս	6-րդ հոդվածի 1-ին մասում «24 ժամվա ընթացքում» բառերը փոխարինել «հնարավորինս սեղմ ժամկետում» բառերով.	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
20.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	Հոդված 6, 2-րդ մաս	6-րդ հոդվածի 2-րդ մասում «պատվիրված փոստի միջոցով» բառերից հետո լրացնել «՝ նրա հաշվառման վայր» բառերը.	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
21.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	Հոդված 7, 3-րդ մաս	7-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում «կայացման» բառը փոխարինել «մասին իրազեկելու» բառերով.	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:

22.	**Պատգամավոր** **Հրայր Թովմասյան**	Հոդված 7, 3-րդ մաս	7-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում «ոստիկանին» բառը փոխարինել «Ոստիկանության ծառայողին« բառերով.	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
23.	**Պատգամավոր** **Հրայր Թովմասյան**	Հոդված 7, 4-րդ մաս	7-րդ հոդվածի 4-րդ մասում «միջամտության» բառը փոխարինել «սահմանափակման» բառով.	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
24.	**Պատգամավոր** **Հրայր Թովմասյան**	Հոդված 7, 7-րդ մաս	7-րդ հոդվածի 7-րդ մասում «պատվիրված փոստի միջոցով» բառերից հետո լրացնել «՝ նրա հաշվառման վայր» բառերը.	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
25.	**Պատգամավոր** **Հրայր Թովմասյան**	Հոդված 7, 15-րդ մասբ	7-րդ հոդվածի 15-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Անհետաձգելի միջամտության որոշման մեջ նշվում են դրա բողոքարկման ժամկետը և մարմինը, ներառյալ դատարանը, որին որոշումը կարող է բողոքարկվել, ինչպես նաև այն խախտելու համար օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցները: Անհետաձգելի միջամտության որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով՝ ընտանիքում բռնություն գործադրած անձին դրա մասին	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:

			իրազեկելուց հետո հնգօրյա ժամկետում, ինչպես նաև դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում: Որոշման դեմ բողոք բերելը չի կասեցնում որոշման կատարումը: Վարչական բողոքը քննվում և դրա հիման վրա որոշում է կայացվում այն ստանալուց հետո հնգօրյա ժամկետում:».		
26.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	Հոդված 8, 5-րդ մաս	8-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետում «ընտանիքում» բառը փոխարինել «ընտանեկան» բառով.	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
27.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	Հոդված 8, 7-րդ մաս	8-րդ հոդվածի 7-րդ մասում «որոշումները» բառերը փոխարինել «ակտերը» բառով.	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
28.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	Հոդված 11, 3-րդ մաս	11-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ոստիկանության ծառայողը և տարածքային մարմնի սոցիալական աշխատողը կանխարգելիչ հաշվառման շրջանակում ամսեկան առնվազն մեկ հանդիպում են ունենում հաշվառման	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:

			վերցված և ընտանիքում բռնության ենթարկված անձանց հետ և բացատրական աշխատանքներ իրականացնում: Տարածքային մարմնի սոցիալական աշխատողը մշտադիտարկման ընթացքում բռնության կրկնման վտանգ հայտնաբերելու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնում է Ոստիկանությանը:		
29.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	Հոդված 14, 2-րդ մաս	14-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «և իրավապահ մարմինների» բառերը փոխարինել «,Ոստիկանության, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի, դատախազության» բառերով.	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
30.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	Հոդված 14, 3-րդ մաս	14-րդ հոդվածի 3-րդ մասում «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան» բառերը փոխարինել «Մարդու իրավունքների պաշտպան» բառերով.	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
31.	**Պատգամավոր Հրայր Թովմասյան**	Հոդված 17, 1-ին մաս	17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «սահմանում է» բառից առաջ լրացնել «ապահովում է ընտանիքում բռնության ենթարկված անձանց համար անհատույց առաջնային բժշկական օգնություն,» բառերը.	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:

32.	**Պատգամավոր** **Հրայր Թովմասյան**	Հոդված 17, 1-ին մաս	17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «իրավապահ մարմիններին» բառերը փոխարինել «Ոստիկանությանը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին կամ դատախազությանը» բառերով.	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
33.	**Պատգամավոր** **Հրայր Թովմասյան**	Հոդված 17, 1-ին մաս	17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «իրավապահ մարմիններին» բառերը փոխարինել «Ոստիկանությանը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին կամ դատախազությանը» բառերով.	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
34.	**Պատգամավոր** **Հրայր Թովմասյան**	Հոդված 20, 5-րդ մաս	20-րդ հոդվածի 5-րդ մասը 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն. «Անձին ապաստարանում տեղավորելու վերաբերյալ որոշումը պետք է լինի պատճառաբանված:».	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
35.	**Պատգամավոր** **Հրայր Թովմասյան**	Հոդված 20, 6-րդ մաս	20-րդ հոդվածի 6-րդ մասում «ուսման հնարավորություններով» բառերը փոխարինել «դասապատրաստման	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար	Ընդունվել է:

			համար անհրաժեշտ կահավորմամբ և պիտույքներով տարածություն.».	լրամշակվել է:	
36.	**Պատգամավոր** **Հրայր Թովմասյան**	Հոդված 23, 2-րդ մաս	23-րդ հոդվածի 2-րդ մասում «Նույն ժամկետում» բառերը փոխարինել «Վարչապետը հաստատում է Լիազոր մարմնին առընթեր խորհրդի անհատական կազմը, իսկ» բառերով.	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
37.	**Պատգամավոր** **Հրայր Թովմասյան**	Նախագիծ	Նախագծի ողջ տեքստում «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը փոխարինել «Կառավարություն» բառով.	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
38.	**Պատգամավոր** **Արփինե Հովհաննիսյան**	Հոդված 2, 1-ին մաս	2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «երեխայի» բառից հետո լրացնել «լավագույն» բառը	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
39.	**Պատգամավոր** **Արփինե Հովհաննիսյան**	Հոդված 3, 1-ին մաս	«Անտեսումը» նախատեսել, որպես բռնության առանձին տեսակ	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
40.	**Պատգամավոր** **Արփինե Հովհաննիսյան**	Հոդված 3, 2-րդ մաս	«ինչպես նաև դիտավորությամբ ֆիզիկական տառապանք պատճառելը» փոխարինել «դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը» բառերով	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է:
41.	**Պատգամավոր** **Արփինե**	Հոդված 8, 5-րդ մաս	8-րդ հոդվածի 5-րդ մասի 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը	Ընդունվել է:

	Հովհաննիսյան		«ընտանիքում բռնություն գործադրած անձի վրա դնել պարտականություն անցնելու ռեբիլիտացիոն ծրագիր.»	համապատասխանաբար լրամշակվել է:	
42.	**Պատգամավոր** **Արփինե Հովհաննիսյան**	Հոդված 9, 2-րդ մաս	Հստակեցնել «Անկախ նշված պայմանից» արտահայտությունը	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է:	Ընդունվել է: